ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«30» «Մարտի» 2023թ. N 48-Լ

ՀՐԱՄԱՆ

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 106-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով շրջակա միջավայրի նախարարի 2018 թվականի հունիսի 22-ի N 172-Լ հրամանի 18-րդ կետի 11-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Անտառային կոմիտեի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 25-ի «Անտառային կոմիտեի գործավարության կարգը հաստատելու և շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի նախագահի 2021 թվականի հունվարի 22-ի N 03-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 106-Լ հրամանի հավելվածը լրացնել նոր 168.1-168.2 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«168.1 Կոմիտեի թեժ գծով ստացված դիմումի (բողոք, առաջարկություն) ընդունումը և հաշվառումը կազմակերպում է Կոմիտեի նախագահի կողմից նշանակված պատասխանատու անձը, ով՝

1) Կատարում է թեժ գծով ստացված դիմումի ընդունում և գրանցամատյանում ընթացքի վերաբերյալ հաշվառում (զանգահարողի անձնական տվյալներ՝ անուն, ազգանուն, բնակության վայր, հեռախոսահամար, դիմումի բնույթ, դիմումի պատասխան),
2) Դիմումը ներկայացնում է Կոմիտեի գլխավոր քարտուղարին՝ ըստ բնույթի համապատասխան ստորաբաժանմանը մակագրելու նպատակով:

168.2. Համապատասխան ստորաբաժանումը իրականացնում է դիմումով ներկայացված փաստերի ուսումնասիրում, գնահատում և ստեղծված նյութերը համապատասխան եզրակացությամբ ներկայացնում է գլխավոր քարտուղարին՝ դիմումի ընթացքն ապահովելու նպատակով:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

30.03.2023

X

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Подписано: KIRAKOSYAN VLADIMIR 1104840278

Վ. Կիրակոսյան

«30» «մարտի» 2023թ.

ք.Երևան